

ՀՆԶԱԿ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆԶԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՊԱՌԱՒ ԾԱՂԱԾՈՒՆ

Տաճիկ կառավարութեան ներկայ ընթացքը խիստ բնորոշ է: Արա քաղաքականութեան վերջնական սնանկութիւնն է, որ այժմ դուրս է թափանցում այն ամեն խաբուսիկ կարկատաններէ, որոնցով վերջին տարիներում նա այնքան ճիգ էր թափում ապշած ու զարմացած աշխարհի աչքից ծածկել իր մերկ ու նեխած մարմինը:

Պառաւ ծաղրածուն, որի ակռաները թափվեցան հայկական ոսկորները կրծեղուց, կորցրել է այլ ևս իր խաճնելու եղակի յաակութիւնը, և աշխարհն այդ արիւնդուշտի սխրագործութիւնների պատճառով չափազանց խիստ լացելուց՝ այսօր անզուսպ ծիծաղով է բռնվել, տեսնելով պառաւած մասխարայի ծաղրածուական մարմնամարզութիւններն իր քաղաքականութեան մէջ:

Ամեն տարակոյսից դուրս է, որ սուլթանն այժմ փորձ է անում կիսաշրջան անել իր ոսկրացած ոտների վրայ և փոխել իր քաղաքականութիւնը հայերիս նկատմամբ: Ինչպէս աղուէն իր որսը հսկելիս՝ խրճիթը շրջապատող ցանքի ետեւից նայում է որպէս հաւերը պտտում են բախում, սուլթանն էլ սխեւ է դէթ միառժամանակ զուարճանալ յոգնած ու լքված հայերի կիսակենդան որուականներից, առանց, ըստ երևոյթին, նրանց հալածելու, վտահ լինելով, որ ի վերջոյ նրանք իր զոհերն են լինելու:

Այսպէս, հնչելն, պոռոչկոտ էր իսկ նրա փողերի ձայներն «ընդհանուր ներում» ասված «մեծագործութեան» համար, թէև դա բոլորովին չը խանդարեց, որ հազարաւոր հայ բանտարկվածներից ու աքսորվածներից մի քանի տասնեակներ միայն սխեւին մաքուր օդ շնչել բաց երկնքի տակ: Աւրօպական տէրութիւններից իւրաքանչիւրն իրան էր ուղում վերագրել սուլթանի այդ քաջական «մեծասրտութիւնը»: Վստմնելի հեգնութիւն. հարիւր հազար հայերին անպատիվ կերպով կոտորել թողնելուց յետոյ, այսօր այդ պառաւ «քաղաքակիրթ» տէրութիւններն ակռաւային աղմուկ են բարձրացրել, որ մայր հայրենիքին «վերադարձին» մի քանի տասնեակ զաւակներ, որոնք տարիների ու ամիսների ընթաց-

քում բանտերում կրել են ամեն տեսակ տնարգանք, գանախոծութիւն և այժմ, դրեթէ կիսամեռ վիճակում, յանձնվում են իրանց մայր հայրենիքի «գիրկը», որպէսզի այնտեղ արձակեն իրանց վերջին շունչը, վերջին հառաչանքը....

Անիրաւացի կը լինենք, սակայն, եթէ չը խոստովանենք, որ սուլթանի քաղաքականութեան փոփոխութիւնը պէտք է վերագրել այն երկիւղին, որ կրում է նա վեց պետութիւններից: «Այն այդ ծիծաղաշարժ ընդհանուր ներումը, որպէս և մի քանի այլ ձեական, և միմիայն ձեական, զիջումները, որոնք անելու ձե է ցոյց տալիս սուլթանը, բացատրվում են առաջնապէս նրանով, որ այդ պառաւ աղուէսը երկիւղ կրելով վեց պետութիւններից, ճիգ է թափում այս վերջինների «աչքին թող փչել» և «բարենորոգումներ» անելու խաբէութիւններով նրանց կողմից սպասված հարուածը նախազգուշացնել: Վրանումն է Համիդի գաղտնիքը: Վրա վրայ է այժմ նա գործածում իր քաղաքականութեան ամբողջ ճկունութիւնը:

Իայց թէ ինչ ընթացք կը բռնեն եւրօպական տէրութիւններն օսմանեան վեհապետի այդօրինակ ընթացքի առջև — զրանումն է այժմ հարցը: Թւում է, թէ այլ ևս մերկացված ու ճանաչված է սուլթանի ամենատկար կողը, որ մեծ տէրութիւնների դանակը կարող կը լինի անդամահատել: Սակայն այն ստոր ինտրիգները, որ ըստեղծում են միմեանց դէմ այդ տէրութիւնները, այնքան էլ հաւանականութիւն չեն տալիս, թէ նրանք ամենքն անկեղծօրէն ցանկանում լինեն կրտրելու տաճկական վեշապի գլուխը և ապառելու երկիրը թիւրք կառավարական սխառէմ ասված ժանտախտից:

Անգլիական Վորդերի Պալատում վերջերս Սօլբերին ներկայացրեց վերին աստիճանի հետաքրքրական վկայաթղթեր, որոնցից պարզ երևում է, թէ ինչ ընթացք են ունեցել վեց պետութիւնները թիւրքիայի ձգնաժամի նկատմամբ: Ինչ թէ այդ վկայաթղթերն ապացուցանում են, որ անգլիական տէրութիւնն ունեցել է նախաձեռնող դեր՝ ճնշում գործելու սուլթանի վրայ և պահանջելու անմիջական գործադրութիւն անհրաժեշտ բարենորոգումների, որոնք պէտք է մշակէ մի յատուկ Վեսպանաժողով և. Պօլսում, ընդհա-

կառավար, միւս կողմից բոլորովին հաստատուում է այն, ինչ այս սիւնակներում սկզբից ի վեր մենք զրեւ ենք շարունակ. — Ուստաց տէրութեան անսպասան հակառակութիւնը Սօլզբերիի առաջարկներին, և Ֆրանսիական տէրութեան հաւատարիմ ծառայութիւնը Յարի տէրութեան շահերին ու զիտումներին: Սակայն ի վերջոյ Յարը համաձայնելովում է Վեսպանաժողով գումարելու գաղափարին, բայց և անմիջապէս նոր ինտրիգների է դիմում Նէլիգօլը, յարուցանելով «Ֆինանսական բարենորոգման» և այլ խնդիրներ թիւրքիայում: ... Եւ այդպիսով այդ Վեսպանաժողովը, որ այժմ տեղի ունի Ա. Պօլսում, վտանգ է կրում, Ուստաց տանի շնորհով, դառնալ մէկ ամենադառն ծաղր, որ երբ և է մեծ պետութիւններն արել են թիւրքիայի լծի տակ հեծող թշուառ հայ ժողովրդի հասցէին:

Գրանք են, այդ մեծ գործերը, եւրօպական քաղաքականութեան զեղեցկութիւններն ու հրաշքները, որ օժտում է նա մեզ ողբերգութեան վերջին արարուածի վերջին տեսարանում:

Բայց դա ներշնչեց մի նոր վարպետութիւն սուլթանին: Սա աւելի առաջ է տանում իր «մեծահոգութեան» գործերը: Այն ստոր արարածը, որի անունն է Աշդեան, ինչպէս երևում է, իր դափնիներով նորաճնունդ պատրիարքին չէ թողնում քննալ, թէեւ բնաւ նախանձելի չէ այն, որ Աշդեանը սուլթանի շքանշանի հետ միասին ստացաւ կապարի հարուած, որը, ճիշդ է, վնաս չը տվեց այդ վեղարաւորի օժված մարմին, բայց, ընդհակառակը, անուղղելի վնաս տվեց նրան պատմութեան մէջ: Ինչ որ էլ է, իրողութիւնն այն է, որ Օրմանեանը նախամեծար է համարում իրան օրինակ ունենալ Աշդեանին, մէկ այլ եղանակով դառնալով գործիք սուլթանի ձեռքը, քան Դըմիրլեանին, որն այնպիսի որոտնդոտ աղմուկով ասպարէզ էլաւ, բայց ի վերջոյ հանգարտ հալվեց ու մարեց, ինչպէս մոմէ ճրագ, քաջութիւն չունենալով իրան կախել տալ սուլթանական ձեռքով այնպիսի մի եղբւական վայրկեանում, երբ թիւրքահայերի այդ ծայրագոյն «հոգեւոր հայրը» տեսնում էր իր աչքի տակ և իր շուրջն իր «հարազատ» զաւակների լեռնացած դիակներն ու արիւնը՝ ջարդված ու թափված նոյն սուլթանական ձեռքով:

Օրմանեանն այսօր սուլթանին պատկանող առէկէիին է. ինչ շարժումա՞ծ ուղենայ՝ կը տայ նրան, ինչ խօսքեր ուղենայ՝ կը լսէ նրանից, ինչ աչքակապութիւն ուղենայ՝ կանի նրա միջոցով... ի խաբէութիւն եւրօպական տէրութիւնների և... ի միթարութիւն հայ «սիրեցեալ ազգի»: Եւ ի՞նչ ազգ, ամենքը պոռում են,

թէ նա սիրեցեալ է, և նա, ով ամենքից շատ է պոռում այդ, անշուշտ, ամենքից էլ աւելի անտարբերն է դէպի նա: Նրան խաբում են:

Այսպէս, այդ նորատեսակ աղուէսը, որը, սակայն, իր գործերով աւելի արջի վայելչակազմութիւն ունի, քան աղուէսի խորամանկութիւն, իր վեհափառ տէրի հրամանով ու կարգադրութեամբ կազմում է «բարենորոգումների» մի ցուցակ իր «սիրեցեալ հօտի» համար: Այդ ցուցակը, նախապէս գաղտնի կերպով թելադրված սուլթանի կողմից, Օրմանեանը, ասպետական դարերին արժանի անվեհերութեամբ, մատուցանում է «յոտըս վեհափառ կայսեր», որն էլ, օհ հրաշք, բարեհաճում է ընդունել այն: Աստափախաղը, սակայն, կիսատ չը թողնելու համար, սուլթանը «հարկ» է տեսնում մի քանի «փոքրիկ» փոփոխութիւններ մտցնել այդ «բարենորոգումների» ցուցակում, և երկունս էլ մնում են գոհ իրանց զերերից:

Ինչ, ահա այդ տեսակ կատակախաղերով է, որ Օրմանեանը, ձեռք ձեռքի տված սուլթանի հետ, փորձում է խաբել հայ ժողովրդին: Եւ ինչպիսի հրաշքներ. առեւանգված ու անարգված կոյսերը, ամուսնախառն ամուսինները, որբերն ու անտունները, որոնք ամենքն էլ բռնութեան տակ մահմետականութիւն են ընդունել, այժմ կարող են, Օրմանեանի միջամտութեամբ ու վեհափառի թողտուրութեամբ, դառնալ զիրկն իրանց քրիստոնեայ հաւատքի, որի ամենաբարձր ներկայացուցիչն է այսօր հայերիս մէջ նոյն Օրմանեանը: Եւ... իսկ նրանց, այդ տասնեակ հազարաւորների, այլ ևս ջարդված կեանքը — այդպէս էք վերա դարձնում այն իրանց. իսկ նրանց գոյքը, հարստութիւնը, նրանց հարիւր հազար հարազատների մահը՝ մեծ լիազորութիւն մահակից ստացված — ինչով էք վարձատրում այն. իսկ նրանց կրած գերմարդկային տանջանքները, նրանց շարժարանքներն՝ անլուր հաւածանքից, սովից, ջրտից, հիւանդութիւններից և նրանց կրած տմարդի անարգանքները — ամենն էլ ստացված մէկ արիւնուշտ, ձիւաղային խեղափարի անզուսպ կամքով և հայ քծնող, ոտնալէզ ու զգուշելի ստորաքարշների ու վախկոտ մեծանուն սրիկանների ազգադաւ ընթացքի շնորհով:

Այսպէս, պարզվում են Մեծ Կաղաճուի մեքենայութիւնները: Այնպիսի մի ժամանակ, երբ նա երկիւղ է կրում եւրօպական տէրութիւններից, ըշտապում է Օրմանեանի միջոցով կասեցնել այդ տէրութիւնների բռնած ազգարար ընթացքը: Նա ստիպում է մեր պատրիարքին հայերի կողմից «բարենորոգումների» ցուցակ շինել և ապա ընդունելով այդ նոյն իր հնարած ցուցակը, մեծ տէրութիւններին յայտարարել, թէ պատրիարքի

դպրահանձններն արդէն ընդունված և դործադրվում են՝ և, ուրեմն, եւրօպական ճնշման այլ ևս տեղի չը կայ: Օրմանեանն էլ այդպիսի խաբէրայական զէնք է տալիս Մեծ Մարդասպանի ձեռքը... Եւ անշուշտ իր դերը կատարեալ կերպով լրացնելու համար է, որ նա, հետեւելով իր մեծափառի խրատին ու եռակի ընթացքին, միւս կողմից էլ փորձ է անում խաբել հայ յեղափոխականներին: Տարօրինակ համարձակութեամբ նա դէպի մեզ է ուղարկում յատուկ առաքեալ՝ մեզ համոզելու համար, որ շարժում չանենք, որովհետեւ սուլթանը բարենորոգումներ է անելու շուտով, որովհետեւ նա մեծահոգի է... Այո, նա մեծահոգի է նոյնչափ, որչափ Օրմանեանը՝ սուրբ: Երկուսն էլ իրար նրման են նրանով, որ պառաւ աղուէն ուղղում է խաբել թէ Եւրօպային և թէ մեզ, և մեր պատուրիարքն էլ նրա ձեռքին ծառայում է մի գործիք այդ նպատակի համար:

Բայց հայ ժողովրդի ամեն թշուառութիւնները, որոնք կրելու և չը յուսահատվելու չը տեսնված հերոսութիւնն ունեցաւ նա, այդ ամեն թշուառութիւններն աղաղակում են վրէժ և նա, այն պատմական Մեծ Հալածեալը, հայ ժողովուրդը, դեռ չէ կորցրել և երբէք չի կորցնի իր պատմական ճգնաժամը դէպի մի կեանք՝ պատշաճ ամեն մարդու և ամեն ազգի, մի կեանք, ուր կարող է թափանցել լոյսը, կենդանութիւն տալ ամենքին և ամեն ինչի, թարմացնել, զգաստացնել, ծաղկեցնել նրանց և սահեցնել նոր կեանքի անիւք դէպի առաջ, հարթված ու պարզված ուղիով, դէպի առաջ, դէպի ընդհանուր ու ամբողջական ներդաշնակութիւն ճշմարիտ երրորդութեան — մարդու, կեանքի և բնութեան:

Եւ դրա համար, այդ պատմական մեծ գործի համար, որ հանդիսանում է նրա պատմական անխուսափելի պարտականութիւնը, այդ նոր Մեծ Հալածեալը, հայ ժողովուրդն, ունի իր Մովսէսը, բայց մի Մովսէս, որ չէ անհատ, որ անմարմին է, որ կը մարմնանայ հայութեան ապագայ կեանքում: Այդ Մովսէսը — Վաղարշապէս է, արտայայտիչ մեր կենսական նորագոյն ձգտումների, ոյժ՝ ըմբռնելու համար մեր ապագան: Եւ նրա իրագործման պատմական անհրաժեշտ ուղին — յեղափոխութիւնն է ու կերպարանափոխութիւնը մեր կեանքի ներկայ պայմանների՝ նոյնքան հնացած ու արգելադրութ մեր զարգացման համար, որքան և խեղդված, վայրենացած ու անտանելի դարձած՝ շնորհով բռնակալ ու գաղանային մի տէրութեան արարքների:

Այդ պատմական ձգտումը և այդ պատմական ուղին չեն կարող չքանալ սուլթանա-օրմանեանական աչքակապ խաբէութիւններով և այդ նեխած ուղիղների ու ապականված սրտերի խար-

դախ հնարներով:

Ինչպէս Հսկան թղուկների միջով, այդ պատմական ձգտումն իր ուղիով առաջ կընթանայ, միշտ սուլթանապաշտ գաղանների ամբոխը ձեղքելով և սուլթանի տապարով ցանված դիակների վրայով: Նա կընթանայ առաջ, կը տայ շունչ, հոգի հայ ժողովրդին, կը տայ նրան այն զէնքը, տոկունութեան ու ինքնավստահութեան զէնքը, որ միշտ դէպի առաջ է մղում ժողովրդներին, որ միշտ առաջ է մղում մարդկութեանը դէպի ազատման սուրբ կռիւ, դէպի ապագան, դէպի բաղդաւորութիւն:

Չը խաբվենք և չը վհատվենք. և թող պառաւ ծաղրածուն սրէ իր վերջին ախաները. դրանք էլ շուտով կը փշրվեն մեր գիմադրութիւնից:

ՆԱՄՐԱԿՆԵՐ ԿՐԻԿՐԱՅԻՑ

(Շարունակութիւն*)

Չոր-Մարգ. 15 Գեկտեմ. 1896

Բայասի Գայմագամը բաղմամբ ուստիկաններով և պաշտօնեաներով մի շաբաթ առաջ հարկահաւաքութեան ելած էր շրջակայ գիւղերը և այդ առիթով զանազան բարբարոսական եղանակներով կը կեղբէ, կը հարստահարէ՝ արդէն մերկացած հայ գիւղացին: Այս Գայմագամը սուլթանի հաւատարիմ և իրեն արժանի մի թուրք պաշտօնեայ է՝ մոլեռանդ, խորամանկ, արկայ և հայերի ոխերիմ թշնամի: Ժամանակի և հանգամանքների համաձայն նա կը փոփոխէ քրիստոնեայներու հետ վարուելու կերպերը և ընթացքը. երբեմն խորամանկ աղուէսի նման և երբեմն ալ քաղաքավարի կերպով: Այս անգամ, տուրքի տուարները բաց ըրած, հետզհետէ իր մօտ բերել կը տայ պարտապանները, որոնց հետ կը խօսի շատ քաղցրութեամբ, խրատելով և խնդրելով: Տունը հրդեհուած, ինչքը կողոպտուած հայը կը բացատրէ իր վիճակը և կը յայտնէ, որ չի կարող վճարել մէկ զուրուշ իսկ: Գայմագամը, որպէս թէ ցաւելով անոր աղքատութեանը վրայ՝ կը պատասխանէ՝ թէ «գնա գտիր տղաս, գնա»: Սակայն, երբ տնէն դուրս կելէ հայը, մասնաւորապէս հրահանգուած ուստիկանները կը ձերբակալեն և, առանց մտիկ դնելու անոր աղաչանքին կամ պողոցին, հայհոյելով, անարգելով կը տանին բանտ, մինչև որ կը տանան իրենց պահանջածը: Ուստիկանների մէջ մի տասնապետ, Պէօյիւք Մուհամմէտ անունով, որը երկու տարի առաջ Այասի մօտ, յայտնի կերպով սպաննեց մի քեսապցի հայ և, իբր վարձատրութիւն, անմիջապէս տասնապետութեան աստիճանին բարձրացաւ. այս սրիկայ հարկահաւաք ուստիկանը, արդէն արիւնարբու, երգուած թշնամի հայերուս և նըշանաւոր՝ չարարանքի համար իր հնարած նորանոր ռաքանչելի գիւտերով, այժմ աւելի ևս քաջալերուած է սուլթանի պաշտօնեաների կողմէ և անկարագրելի են իր գաղանութիւններն ու շահատակութիւնները:

Գայմագամը այս կերպով բաղմամբ հայեր կը լեցունէ բանտը և յետոյ, ուստիկաններ ուղարկելով անոնց տեղը, ինչ որ կը գտնուին, փլիված անկողին,

տնային և երկրագործական կահավարտի, հինցած շո-
րեր, վարուցանի եզը ևն ևն, հաւաքել տալով մու-
նետիկին կը յանձնէ, ամենաշնչին գնով ծախել կը տայ
և կը գանձէ պահանջած տուրքերու փոխարէն: Այս
վարպետուկ եղանակով վաճառել կը տայ նաեւ շրջա-
կայ հայ գիւղացու կեանքի և պատւի պահպանը ե-
ղող զէնքը, որի համար այնքան ջանքեր թափեց թուրք
կառավարութիւնը, բազմաթիւ զոհեր տուաւ և վարձ-
եալ անկարող մնաց մինչև վերջին ժամանակներս... Եւ
ի հարկէ ովքեր պիտի լինին գնողները — կրօնամուլ և
կատաղած թիւրքերը:

Վերջին շաբաթներս կառավարութիւնը օգտուելով
ժողովուրդի ներկայ դառն կացութենէն՝ կը ջանայ պաշ-
տօնական հանգամանք տալ և բոլոր գաւառներէն
մուխթարներու և ոստիկաններու միջոցով, թրքասէր
կղերներու և ջոջերու աջակցութեամբ ձիգ կը թափէ վա-
ւերացնել Գաղանձեանի Վաթոյկիկոսութիւնը: Այս նը-
պատակի համար Ատանայի Փոխ-Առաջնորդի մասնաւոր
նամակով միասին շրջաբերութեան է հանուած մի հան-
րագիր՝ ստորագրելու բոլոր ժողովուրդի կողմէ՝ ուղղուած
Մեծ-Եպարգոսին, Թէպէտ թէ քաղաքացի և թէ գիւ-
ղացի չեն ուզեր կնքել և տուելով կատեն այդ թըր-
քասէր եպիսկոպոսին, սակայն, կառավարական սպառ-
նալիքի և ստիպումի տակ ակամայ պիտի ընդունին և
վաւերացնեն: Այս փնտաւոր գործի համար մասնա-
ւոր պաշտօնեայ է կարգուած «Սիւրահաններու»
պետ, յայտնի տ. Ղեւոնդ Զէնեանեանը, որը, տա-
րիներէ ի վեր, իւր շէյխութեամբ, անպարկեշտ ա-
րարքներով ու քարոզներով Վիլիկեցիներու մէջ մե-
ծամեծ չարիքներ առաջացուց, խայտառակութիւններ ը-
լաւ ու գործեց, և, այսօր ալ սուլթանի կողմէ կաշառ-
ուած, միացած Գաղանձեանի և միւսների հետ, կաշ-
խատի որոմներ ցանել հայ հասարակութեան մէջ:

Ար լսենք թէ գայմազամը գրեր է զօրքերի գօլ-
աղասիին և յայտներ, թէ մտադրութիւն ունի Չոր-Մար-
զուան գալ. սակայն վերջինս, զայրացած մերժեր է ա-
նոր գալուստը ըսելով թէ՝ «զինուորները անօթի մեռ-
նելու չեն. մեծ գումարների կարիքը ունիմ և ամեն
օր այս տեղէն հաւաքելով կը ծախսեմ...»: Այս եր-
կու պաշտօնեաները, որպէս նաեւ միւսները, իրարու ու-
խերիմ հակառակորդներ են և միշտ կը ջանան մէկը
մէկու վարկ կոտրել, փնտսել: Ոչ մի պաշտօնեայ, ոչ
մի ոստիկան ամսաթուղակ չի ստանար. զինուորները ա-
նօթի կը մեռնին, եթէ տուրքի դրամները չը յանձ-
նուին իրենց:

Մարդակեր և ոճրագործ Համիտը իրատէ է հա-
ներ հայերու թալանուած ապրանքները, ուր որ գտ-
նուին, հաւաքել բռնութեամբ և վերադարձնել տի-
րոջը: Հաւատարիմ պաշտօնեաները անյապաղ և ան-
թերի կը կատարեն անոր հրամանները... Անցեալ-
ները Օճազը գիւղացի Պողոսը, նախապէս կորսնցու-
ցած մի ուղտ, մի քանի այծեր ևն. տեսնելով թիւր-
քերի ձեռք, որոնք մուսնետիկի միջոցով կը ծախէին
շուկայի մէջ, զիմեց կառավարութեան և պահանջեց ի-
րեն վերադարձնել անասունները, սակայն արդարա-
գործ միւլթիին ծիծաղելով պատասխանեց իրեն թէ՝
«ոչ ում, պու մալար սէնին օլտուղու ալէմ պիլի, ամ մա,
շիմտի իսլամըն էլինտէն ալուպ՝ կեալուրա թէսլիմ
էթմէզիդ» (տղաս, աշխարհ գիտէ, որ այս անասուն-
ները քուկդ են, սակայն, այժմ իսլամէն առնելով
կեալուրին յանձնել չենք կարող): Գատաւորը բա-

ցարձակ կերպով կը պոռայ, թէ «ամսական ալ չենք
ստանար եւ, որին որ հանդիպինք, պիտի մերկացնենք,
ինչ անենք»: Յիշեալ Պողոսը մի օր բանտարկեցին
այդ անասուններին տէր լինելուն համար՝ և բացի այդ,
մօտը գտնուած դրամները փօխը կողոպտէր է աւելով՝
«Կեալուր, ինչպէս կը յանդգնիս տիրանալ թիւրքի
ձեռք գտնուած անասուններին»: Պողոսը ձեռնունայն
ունեցածն ալ վրայ տալով ազատուեցաւ... ահա սուլ-
թանի պաշտպօղազ կառավարութեան գործադրած ար-
դարութեան մի փոքր օրինակը...

Նոյն գիւղացի Բէլեան Անէս ունէր մի ձի, դը-
րացի թիւրքերը նախանձելով՝ երկու սուտ վկայ ներ-
կայացուցին դատարանը և հայուն ձեռքէն խլեցին ձին,
որը իր ապրուստի վերջին միջոցն էր: Սոյն օրինակ գէպ-
քեր անհամար են, որոնց քաջալիրողը, պաշտպանը նոյն
իրենք՝ կառավարական պաշտօնեաներն են: Օրը ցե-
րեկով ախոռներէն կը տանեն հայ երկրագործի կեն-
դանները, տուներ կը ծակեն, կը կողոպտեն, կը զըր-
պարտեն ևն ևն... ոչ որ չը համարձակիր լքողքել
կառավարութեան:

Անցեալ օր ձիաւոր զօրքերի Պաշ-Չափուշը Ալէք-
սանդէտէն վերադարձող մի քանի հայեր կը բռնէ,
չարաչար կերպով կը ծեծէ և անոնց մօտը գտնուած
դրամներն ալ կը կողոպտէ: Յետոյ կը հանգիպի Չոր-
Մարզուանէն Բիլիսի Զօկոբին, որի վրայ կը յարձա-
կի կատաղած և կը պոռայ՝ «պէն ահա էթմիշիմ կեա-
վուր էօլտիրմէք. (ուխտած եմ կեալուր սպաննել):
Սրի կրնակով չարաչար կերպով ծեծ ուտելէ յետոյ
խեղճ հայը հազիւ հրաշքով խոյս կը տայ ձեռքէն և
կազատուի. թիւրք խուժանին ընդհանուր դիմադրու-
թիւնը կը պատկերանայ այդ ընթացքին մէջ:

Ներքին ամեն կողմերը թէ առևտուրը և թէ երկ-
րագործութիւնը բոլորովին ընկած են: Չոր-Մարզուանի
և շրջակայ հայ գիւղերի վարուցանը իսպառ գաղա-
րած է: Մի կամ երկու գիւղեր միայն, որոնք փոքր ի
չափէ կարող եղան ցանել, ամեն օր թիւրքերը գաղտ-
նի կերպով անոնց երկրագործական գործիքները կը
կոտրեն կամ կը գողանան անոնց արտերի մէջէն. կը
գողանան նաեւ անոնց եղները, կովերը, ձիերը և այլն
և այլն. հայ գիւղացու աշխատութիւնը ու է արդիւնք
չի խոստանար իր և իր ընտանիքի ապրուստը հայթայ-
թելու համար. փնտսը բաղդատելով վաստակի հետ,
անհամեմատ աւելի մեծ է:

Դողովուրդի մէջ տարածախնութիւններ կան, թէ իբր,
սուլթանը իր Ֆինանսական քայքայուած կացութիւնը
մի քիչ կարգադրելու և իշխանութեան ամենակա-
րեւոր պէտքերը գէթ առժամանակեայ կերպով հոգալու
համար զիմում է արեր իսլամ ժողովուրդին, նոր տե-
սակ տուրք պահանջելով: Իւրաքանչիւր իսլամ անհատ
պէտք է մի կամ աւելի արծաթ մէծիտ տայ. անոր
փոխարէն կը խոստանայ նուիրել մի մի մարթինի հը-
րացան և ազատ թողուլ իր կամքին զինուորութեան
գնալու համար: Ասոր հետ մէկտեղ յայտնել է նաեւ,
իբր թէ, մտադրութիւններ ունի նորանոր հրամաններ
տալ հայերի մէջ կոտորածներ առաջացնելու... Գեռ
ևս այդ լէյկթիմուրեան վայրենի գաղանը չէ կշտացել
հազարաւոր անմեղների արիւնը ծծելով...

Ծանօթ մասնիչ Յովհաննէս Վալեանի հօրեղ-
բօրորդի Մինասը այս տարի գատարանի մէջ հարցա-
քննիչ պաշտօնեայ կարգուեցաւ: Այս թղուկ արարա-
ծը, որ իր վատութեամբը միւսէն պակաս չը մնար,

Թիւրքերէն աւելի խիստ կերպով կը ճնշէ և կը կեղեքէ հայերը: Կառավարութեան չը գիտցած կէտերը նա ինքը կը սորվեցընէ, կաշառքի և հարստահարութեան գոնէր բաց կանէ: Այսպիսիների հասուցած վնասը աւելի մեծ է և անդարմանելի, քան մեր ռիսիքիմ կառավարութեան պաշտօնեաների...

Թուէս երկու օր առաջ Թրքաց Էրզին գիւղէն է իջեր մի Մարաշցի հայ իր աշխատութեամբը տպրուստ հայթաթմբու համար: Տեղացի Թիւրքերը կը յարձակին վրան, սաստիկ կը ծեծեն և կուղեն սպաննել: Մի բարեխիղճ Թիւրք կը միջամտէ և կը համոզէ չըսպաննել. միայն մի ոտքը կտարել էին: Հայը կառավարութեան դիմեց և բողոքեց, սակայն իրեն մտիկ անող չըկայ:

ՆԻՋԱԿ.

Ատանա. 20 դեկ. 1896.

Ատանայի մէջ Հայկունի անուն անձի խնդրի համար վաղուց ի վեր բանտարկուած էր Կէօք-Տէրէլեան Կարապետ էֆէնտին, որը դեռ նոր էր վերադարձած Աքեայի բերդարգելութենէ: Շնորհիւ կառավարական պաշտօնեաներու և տեղական հարուստ Թուրքերու թըշնամութեան, զրպարտութիւններու և դիմումներու՝ վերջին ժամանակներս Կէօք-Տէրէլեան մահուան դատապարտուեցաւ Կ. Պօլսոյ կեդրոնական կառավարութեան կողմէ: Այժմ կիմանանք՝ թէ Նահանգին մէջ գըտնուած տաճիկ — քրդերը, տեղեկանալով անոր մահուան դատապարտութիւնը, դիմած են նահանգական կառավարութիւնը և խիստ սպառնալիքով պահանջած են չը գործադրել այդ դատաւճիռը: Այս տաճիկ-քիւրտերը երկար տարիներով ծառայած են յիշեալին և մեծամեծ օգնութիւններ ու պաշտպանութիւններ են վայելած. այս պատճառով շատ կը սիրեն և կը ճանաչեն, որպէս իրենց բարերարը: Քրդերուն այս դիմումը, հաւանական է, բաւական ազդեցութիւն ունեցաւ. վերջերս բանտարկեալի ոտքի շղթաները վար առնուած են և ազատ է եղեր բանտի այս ու այն կողմերը ման գալ:

Անցեալ տարի, Իզմիրլեանի պատրիարքութեան օրով, Կ. Պօլսէն Ատանա և յետոյ Սիս անցան հետեւեալ յայտնի կղերականները — Ֆրոնուզի Նախկին առաջնորդ Նիկոլայոս եպիսկոպոս, Հաճնի Գազանճեան Յովհաննէս եպիս., Աբրահամ եպիս. և յայտնի մատնիչ Կիրակոս վարդապետը: Այդ միջոցները Սիս կաթողիկոսութեան խնդրի պատճառով ահագին աղմուկ և յուզում բարձրացաւ Կիլիկիայի մէջ, որը դեռ ևս կը շարունակուի առանց վերջ գտնելու: Այս չորս կղերականները, որոնցմէ մին կամ երկուսը անցեալի մէջ ունեցած էին նշանաւոր համբաւ և գործունէութիւն, արտաքսուած և բանադրուած էին Պօլսի պատրիարքարանի կողմէ՝ իրենց վերջերս ունեցած ազգակործան ընթացքի պատճառով: Ասոնք ուղարկուած էին սուլթանի և իր փաշաներու կողմէ՝ կաշառուած մեծամեծ խառուիներով ու գումարներով, մասնաւոր հրահանգներով և ճանապարհածախսերն ալ հոգացած էր Թրքական կառավարութիւնը: Իրենց Սիս մեկնելէ յետոյ այս բաղդախնդիր կղերականներու դիմակը վայր ինկաւ. յայտնի գործիք էին այլ ևս թրքական կառավարութեան, անոր շահերուն և քայլ առ քայլ կը հետեւէին Ատանայի վալիի խորհուրդներուն ու հրամաններուն: Իրենց ազգադաւ փարմունքով Կի-

լիկիայի հայ ժողովրդին ահագին վնասներ հասուցին, աղէտներու և թշուառութեան պատճառ եղան և, այսպէսով, ամբողջ հասարակութեան ատելութիւնն ու զայրոյթը հրաւիրեցին իրենց վրայ: Կառավարութեան հակողութեամբ և աջակցութեամբ իրենց մէջէն կաթողիկոս ընտրեցին և օծեցին Գազանճեանը, որը 75-80 տերեկան, ծերացած, տգէտ և Թրքասէր մի կղերական է: Այս ինքնակոչ կաթողիկոսը, վալիի բռնութեան և սպառնալիքի շնորհով, Ատանայի հայոց մի քանիսին կնքել տուաւ իր ընտրութեան թուղթը: Առաջին անգամը լինելով, այդ միջոցները, պատարագ մատուց Ատանայի մեծ եկեղեցւոյ մէջ. բոլոր ժողովուրդը վշտացած դուրս մեկնեցաւ եկեղեցիէն և թողուց իրեն մինակ: Եղեւութիւնը վալիին հաղորդուելով՝ անմիջապէս բազմաթիւ զօրքերով պաշարեց եկեղեցին և բռնութեամբ պահանջեց հասարակութեանը սպասել և աղօթել:

Հաճնի մէջ սպանուեցաւ յայտնի մատնիչ Բօլատեան Գրիգոր անուն անձը, որը երկար ժամանակէ ի վեր պատուհաս էր դարձած տեղացի ժողովրդին և դործիք կառավարութեան պաշտօնեաներուն: Վերջերս այս անձի մատնութեամբ ձերբակալուած էին 10-15 ի չափ անմեղ հայեր: Հաճնի ժողովրդի կացութիւնն ևս անտանելի է դարձած, թշուառութիւնն ընդհանուր և բանտերը լեցուած են միշտ հայերով՝ գլխաւորապէս կառավարական ղանազան տուրքերի պատճառով:

Այնթապ 15 դեկտեմ. 1896.

Ապահովութիւն ըսուած բառը բոլորովին վերցընուած է Այնթապի մէջէն: Մի կողմ թողլով մոլեռանդ խուժանի բարբարոսութիւնները, կեղեքումները, կառավարութեան ամենայնոք զինուորներէն ու ոստիկանէն սկսած, մինչև բարձրաստիճան պաշտօնեաները կողոպտելու, հարստահարելու, յափշտակելու մասին կը մըտածեն: Ժողովրդի թշուառութիւնը դնալով անտանելի կը դառնայ:

Նոյեմբերի վերջերը մի շաբաթ երեկոյ, Թրքական ժամը երկուս և կէսի ատենները, հայ բողոքական երկու եղբայրներ ձեռքերնին լապտերով տուն կը վերադառնային շուկայէն: Ճանապահին երեք գիշերապահ հեծելազօրքերի կը հանդիպին և, չը նայելով որ միասին լապտեր ունին, կը ձերբակալուին. մի քիչ յետոյ երեք մարդկանց ևս կը պատահին և հինգը միասին կապկապած, փողոցներէն քաշկրտելով բանտարկել կը տանեն. աղաչանք, պաղատանք անյսելի և ապարդիւն կը մնան: Այդ պահապաններու հետ ուրիշ խոմբեր ևս միանալով այդ խեղճ ձերբակալուածները կը տանին քաղաքի եզերքները: Անլուր հայհոյանքներ ու նախատինքներ բաւական չը համարելով շատ ծեծ, տանջանքներ կը տան. գաւաղան ու ապտակները անընդհատ կը տեղան խեղճերու գլխին: Կէս գիշերի միջոցները կողոպտելով անոնց մօտ գտնուած բոլոր դրամներն ու կարևոր գոյքերը, որպէս թէ մեղքնալով ու ներելով ճանապարհ կը դնեն: Այսօրինակ դէպքեր անպակաս են. ամենը կը գործադրուին կառավարական պաշտօնեաներու միջոցով և կամ անոնց բացարձակ քաջալերութեամբ: Ժողովրդի դրութիւնը սոսկ կալի է. արդէն անտեսապէս բոլորովին քայքայուած ու ընկած է. սակայն աւելի անտանելի են եղած մո

լեռանդ խուժանի բացարձակ թշնամութիւնն ու սուլ-
թանի պաշիպօղուք կառավարութեան պաշտօնեաներու
արարքները: Աւերոյիշեալ դէպքի հետեւեալ օրն
իսկ այդ հինգ երիտասարդները աղերսագիր տը-
ռւին Միւշիւր փաշային, որը նոր էր եկած Մարաշէն
իւր քաղաքիս այս խառնաշփոթ դրութիւնը հանգա-
տեցնելու համար: Բողոքողները երկու անգամ կանչը-
ռելով հարցաքննուեցան. իսկ հետեւեալ եղաւ՝ ոչինչ
և առանց կարեւորութիւն տրուելու ծախուեցան:

Ալէքսանդրէտի վիճակն ևս մի և նոյնն է: Յա-
փշտակութիւն, գողութիւն, սպանութիւն սովորական
երևոյթներ են դարձած ժողովրդի առջև: Առևտուրը
բոլորովին դադարած է. ոչ ոք չը համարձակիր խա-
նութ բանալ. պաշիպօղուք սուլթանի վայրենի զօրքե-
րը եաղմայի կը տան. դեռ ասոնք ոչինչ. օր չը լի-
նիր որ մարդ չըսպանուի: Ժողովուրդը ոչ ազատ կա-
րող է պտտիլ քաղաքի մէջ և ոչ ալ գիւղերը գնալ:
Այս անտանելի դրութեան պատճառով տեղացի ժո-
ղովուրդը աղերսագիր մը պատրաստեց և ուղարկեց Վ.
Պօլիս սուլթանին. արդիւնքին կըսպասեն... աղերսա-
գրէն յետոյ խստութիւնները աւելի ևս սաստկացան,
որովհետեւ բարի պաշտօնեաները կատաղեր էին:

Անցեալները Տիգրանակերտցի ընտանիք մը, որու
ամուսինը Պօլիս կառավարական պաշտօնեայ է եղեր,
նաւահանգիստ հասաւ՝ ամուսնու մօտ գնալու համար:
Անոջ գոյքերը մաքրատան մէջ խուղարկուած պահու-
նեան կը գոյ շատ ժամանակ առաջ ամուսնէն ըս-
տացուած մի նամակ: Նամակի մէջ վնասակար ոչինչ
չը կայ և այդ լաւ գիտեն մաքրատան պաշտօնեաները.
սակայն կինը իր զաւակներով յետ կը դարձնեն և
գոյքերը կը փոխադրեն մէկ ուրիշ տեղ վերստին քըն-
նելու համար: Թշուառ կինը իր զաւակներով պան-
դոկի մէջ կսպասէ. խնդիրը հեռագրուեցաւ Պօլիս, ուր-
կէ պատասխան է եկած, որ այդ ընտանիքը ճանա-
պարհ դնեն. դեռ ևս պիտի ջրկեն, երբ պաշտօնեա-
ներու քէյֆը լինի:

Օչլութունի ապստամբութեան միջոցին Եէնիճէ գա-
լէի մէջ թիւրք զինուորականներու ձեռքով սպանուած
Փաթրի Սալվաթօրի դատը տեսնուեցաւ Մարաշի մէջ:
Աճիւռ է արձակուած մարդասպանին կախել այնտեղ,
ուր խողովորուեցաւ Փաթրի Սալվաթօրը: Այս առթիւ
Ալէքսանդրէտի և Հալէպի ֆրանսական հիւպատոսնե-
րը կը պատրաստուէին մեկնիլ Մարաշ՝ ներկայ գտնը-
ռելու կախաղանի հանդէսին, սակայն, այս օրեր կիմա-
նանք՝ թէ դատը պիտի վերաքննուի եղել Պօլիս կամ
ուրիշ տեղ և դատավճիռն ալ այնտեղ գործադրե-
ուի. այս պատճառով հիւպատոսները չեն մեկնած:

ԱՐԱԲԿԻՐԻ ԱՆԼՈՒՐ ԿՈՏՈՐԱԾԸ

(Շարունակութիւն*)

Այս հասարակութիւնը անակնկալ փոթորիկէն շը-
փոթած՝ չկարողացաւ պաշտպանել ինքզինքը ըստ ար-
ժանեոյն. մէկ խօսքով կառավարական սովորական վատ
դաւաճանութեանց զոհը և ենթական եղաւ: Այսպէս
ահա սկսեալ հոկտ. 25 չորեքշաբթի օրէն՝ Արաբկիրի
թշուառ ժողովրդեան մի զարհուրելի ճակատագիր վի-
ճակեցաւ: Անգէն և անպաշտպան մարդիկ խուժը խուժը
խողովորուեցան անողորմ գազաններու դիւային մոլեգնու-

թեան մէջ... Ինչպէս պատմել այն արհաւիրքի տե-
սարանի բոլոր մանրամասնութիւնները. ջինջ երկնա-
գմբէթը ծածկուեցաւ սև ու թանձր ծուխով և քա-
ղաքի շէնքերը լափող հրդեհի կարմիր բոցով: Տեղա-
յին թուրք բնակիչը միացած պաշիպօղուք բանակի հետ
և զինուորականութիւնն ու ոստիկանութիւնը զօրաւիգ
առած իրեն՝ անխտիր ու անխնայ կը ջարդէր հան-
դիպած հայը, առանց խտրութեան սեռի կամ հասա-
կի և առանց ուէ խղճմտանքի. ոչ ապաքէն՝ Մուհամ-
մէտի Գուրանը կը հռչակէ թէ՝ կեաւուրի մալը
հէլալ է և կեաւուրի կեանքը բառնալը ջէննէթ-
արժան առաքելութիւն մ'է: Նա այնտեղ կանգ առնե-
լու է. ասկէ անդին պատմութիւն չունի: Ո՛վ որ քիչ
թէ շատ ծանօթութիւն ունի թէ, երբ վայրենի ու մո-
լեռանդ թուրք Գուրանէն ու սուլթանէն ներշնչուած,
երբ գող ու արիւնուշտ մոնկոլ զինուորը միւշիւ-
րի կամ նոյն իսկ Երւտղի նուիրական խալի-
ֆայի բարձրագոյն հրովարտակովը կը զինուի հայուն
դէմ՝ հետեւեալը ինչ կըլայ...

Հոկտ. 25-ի չորեքշաբթիէն մինչև Նոյեմ. 8-ի չո-
րեքշաբթին՝ մի տարտարոսային սոսկալի ժամանակ էր,
ուր կարելի չէ կէտեր դնել՝ որոշելու համար հրե-
շային աւերումներն ու սպանութիւնը: Տեղ տեղ մարդ-
կային անձանաչելի դիակներ բլուրներ կը ձևացնէին,
տեղ տեղ մարդկային կարմիր արիւնը առուակ կաղ-
մած՝ գետիկները կը ներկէր: Հուկան ամբողջ բռն-
կած էր. քաղաքը բոցի անհուն ովկէան մը կը ներ-
կայացնէր... կաւարէին, կը թալանէին, կը քանդէին
հուսկ ապա՝ հրդեհով կոչնչացնէին մարդկային բնա-
կութեան հետքերը... անասնձ կրքեր, վագրէն կա-
տաղի, որոնք անասնութեան սահմաններէն ալ անցնե-
լով՝ հին առասպելական և մտացածին դէերը կը մար-
մնաւորէին բազմաբնույթ, արհաւիրքի և մարդախոշոշ...

Ամեն կողմ կը խուժէր աւերիչ յորձանքը ևս քան
զևս կատաղած և մարդոց մարմիններ աշնան տերեւ-
ներու պէս կը թափթփէին... դեռատի կիներ՝ կո-
ղովորուած ու կիսամերկ, քնքոյշ օրիորդներ՝ պատա-
ռատուն ու սարսափած, փոքրիկ մանուկներ՝ կացութեան
անգիտակից, պաշարուած լոկ մղձաւանջի սարսուռով
մը, խուժը-խուժը, անտիրական և դողդոջուն, մէկ փո-
ղոցէն միւսը կը վազէին, առանց գիտնալու թէ ո՛ր պի-
տի երթան, — ամեն կողմ արիւնխտում թշնամին...
այստեղ մանուկը իւր մօր արիւնջուայ դիակին վրայ կը սո-
ղոսկի, այնտեղ հայրը իւր զաւակաց քովէն քաշկրտուե-
լով՝ գլուխը տապարներով կը յօշոտուի... մէկ ուրիշ
կողմը փոքրիկ երախայի մատղաշ մարմինը երկար ձօ-
ղունի մը վրայ անցուցած և կանանց ուսը տուած՝ վայ-
րենի ամբոխ մը թափոր կը պտտի խլացուցիչ դո-
ռումներով... Գրիգոր Ժ. վարդապետը, կուրծքը մա-
ղի նման ծակծկուած, դիակնացած, բաւական չլինիր
յագուրդ տալու վայրենի կրքերուն, հրդեհուած եկե-
ղեցոյն բոցերուն մէջ կը նետուի: Տ. Ն. Երսէս քա-
հանան, աքսորէն նոր վերադարձած, կառավարութիւն
կը տարուի և հոն հանգիստաւոր կերպով կըսպանուի ոս-
տիկանաց ձեռքով: Առաջնորդական Տեղապահ, Տ. Յու-
սիկ քահանան, դայմագամին ձեռքը, պագնէլէ վերջ՝
երբ կարդը հազարապետին կուգայ, այս վեջինը պըժ-
գանքով յետ կը քաշէ ձեռքը, հայհոյանքով մը յայտ-
նելով թէ չուզեր կեաւուրին պիղծ շթանց հպում-
վը աղտոտել իւր մաքուր ձեռքը, մինչդեռ հարիւրա-
ւոր անմեղներու արիւնն է հոսեցուցած: Գուլի պէյ

Օղջիկենց, որոց մօտ շատ մը հայեր ապաստանած էին, տան առջևէն հոսող առուն կաս կարմիր ներկուած էր. իսկ Շէյխ Օմարին արտը, երկու շարքի վերայ, մին՝ 32-է, իսկ միւսը՝ 18-է բաղկացած անշունչ մարմիններ փռուած էին, ձեռքերն ու ոտքերը կապկպած, դնդա- կի բռնուած և ապա սուրերով պարանոցները կտրը- ուած... Մէկ ուրիշ կողմ հայու մը սէլավէթ տալ կառաջարկէն և ապա քարիւղով կը վառեն թշուա- ուր. անդին անշունչ մարմին մը կանգամահատեն... որ- քան անգթութիւններ, զորս դեռ գործադրած չեն գու- ցէ միջնագարեան ճիւղները, 1 էնկիթիմուրն ու ճինկիդ խաները:

(կը շարունակվէ)

«ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ»

(Daily News-ից)

22 Յունվար. — Լօրդ Սօլսբըրիին ամսոյո 19-ին Լօրտերու ժողովոյ սեղանին վրայ դրաւ մի Պարլամեն- տական թուղթ «Թղթակցութիւն Օսմանեան Կայսրու- թեան մէջ Վարչական Բարենորոգումներ մտցնելու վե- րաբերմամբ» տիտղոսով: Այս տիտղոսը ինքն արդէն բացատրում է թէ ինչ է նրա պարունակութիւնը, ուս- տի համառօտելով զետեղում ենք այստեղ նրա գըլ- խաւոր կէտերը:

«Եւս այդ թղթակցութիւնից դուրս է գալիս, որ Ռուսիոյ Կայսեր այցելութի նը ի Բալթիկայ բոլորովին ապարդիւն եղած է և թէ ժամանակ վերջը միայն հա- կել է դէպի՝ սուլթանի վրայ ճնշում բանեցնելու մտքին: Եւ ահա թէ ինչպէս:

Անցեալ տարւայ Մեպ. 23-ին. Սօլսբըրի յարա- բերութեան կը մտնայ և առաջարկներ կանէ Աւստրիոյ հետ, հիմ բռնելով Օսմանեան Կայսրութեան պահ- պանումը, նրա ներկայ վարչական մեքենային մէջ բա- րենորոգումներ մտցնելու բացարձակ պայմանով: Լ. Սօլսբըրիի առաջարկը վերլուծելի է հետեւեալ հինգ կէտերի մէջ.

1 — Կոնֆէրանս Կ. Պօլսոյ դեսպանների՝ տեղեկա- գրելու համար այն բարենորոգումները որ հարկ է մտցնել թուրք Կառավարութեան մէջ. (ա) ապահովե- լու համար լաւագոյն մի կառավարութիւն և (բ) առ- ջեւր առնելու համար այն սարսափների որ տեղի ու- ձեցան Կայսրութեան զանազան վայրերում:

2 — «Կատառութիւն տեղեկագրին վեց Պետու- թիւնների կողմից և ընդունելութիւն ուէ պիտանի և յարմար առաջարկի՝ նշանակեալ նպատակին հասնելու համար:

3 — Այդ առաջարկների՝ Սուլթանի կողմից մերժ- ման պարագային՝ վեց Պետութիւնների ձեռնարկելիք ճնշող միջոցները՝ նրանց ընդունելութիւնը հաւաստե- լու համար:

4 — Եթէ ո և է Պետութիւն գերագոյն գոր- ծօն գեր չունենալ վերոյիշեալ ճնշող միջոցնե- րի մէջ, նրանց գործադրութեանը համար միւս Պե- տութիւնների կամ նրանցից մէկի քայլերին չընդգի- մանալ:

5 — Այս հինգ կէտերից 2, 3, 4, և 5-ի ըն- դունելութիւնը առաջարկուած է իբր նախնական պայ- ման No. 1-ի մէջ առաջարկված Կոնֆէրանսը կայաց- նելու համար:

Ինչ պատահեցաւ ի Վիեննա այս բանակցութեանց

վերաբերմամբ՝ յայտնի չէ, այլ թէ ստացված պա- տասխանը գոհացուցիչ էր՝ կարելի է եզրակացնել այն իրողութիւնից, որ հոկ. 20-ին Լ. Սօլսբըրիի հինգ պե- տութիւնների՝ ի Բեռլին, Պարիզ, Պետերբուրգ, Վի- էննա, և Հռոմ ուղարկեց Բրիտանական Գեսպաննե- րի միջոցով մի-մի հանրագրական շրջաբերական և վերո- յիշեալ առաջարկը:

— Աւստրիա. հոկ. 20-ին պատասխանում է. «Այո»

— Իտալիա. հոկ. 26-ին կը հաղորդէր Սըր Կար ֆորտին թէ «պատրաստ էր օգնել Մեծն Բրիտա- նիոյ այն ջանքերին, որով նա առաջարկում էր Մեծ Պետութեանց հետ համաձայն՝ Օսմանեան Կայսրութեան մէջ բարենորոգումներ մտցնելու նպատակով:

— Գրանտիա իւր պատասխանը ժամանակ մը ու- չացուց, մինչև որ Հանտո, Հայկական խնդրոյ վերաբեր- մամբ, իր յայտնի ճառը խօսեցաւ Երեսփոխանական Ժո- ղովոյ մէջ և ուր շեշտելով ասաց թէ մերժում է ո և է «ուղղակի միջամտութիւն» կամ Կոնֆէրանսի նը- ման մի գաղափար:

— Ղերմանիա, պատասխանեց թէ ժամանակի պէտք ունի մի այդպիսի կարեւոր զօկումէնտի ուսումնասիրու- թեան համար, բայց Բարօն ֆօն Մարշէլ ասաց թէ իւր Կառավարութիւնը հաճութեամբ կը համաձայնի ո և է քայլ առնելու, եթէ Մեծ Պետութիւնները համաձայ- նութիւն գոյացնեն այդ մասին:

— Ռուսիա, զանազան պատրուակներով, Գիւննեսա- կան բարենորոգիչ նորանոր առաջարկներ մէջտեղ դը- նելով՝ իր պատասխանը ուշացրեց, մինչև որ յայտնուե- ցաւ, որ Նիկոլա Կայսրը ինքն անձամբ սաստիկ հակա- ոակ է եղել Սուլթանի վրայ ճնշում բանեցնելու մտ- քին: Այս ամենը տեղի կունենային Նոյ. 4-ից մին- չև Նոյ. 11. երբ Լ. Սօլսբըրի արտասանեց իւր Գիլ- Տօլի ճառը, որի մէջ կային հետեւեալ խօսքերը. «Տը- նացած քաղաքականութեան մի նախապաշարումն էր այն, թէ Ռուսիոյ և Մեծն Բրիտանիոյ միջև անտաօգ- նիւմը անխուսափելի տիպոգրութիւն է»: Այս խօսքե- րը Յարի վրայ լաւ տպուկութիւն թողնելով և, Կ. Պօլսում Անգլիոյ միւս Պետութիւններու հետ համաձայն գործելու անկեղծութեան վրայ հաւատք գոյացնելով, բաւականին մօտեցաւ Սօլսբըրիին առաջարկին, բայց ճնշում բանեցնելու մասին դարձեալ վերապահումներ ունէր, ասելով, որ եթէ Սուլթանը մերժէ՝ եւրօպական միաձայնութեամբ առաջարկված բարենորոգումների գոր- ծադրութիւնը, այն ժամանակ կարելի է մտածել ճնշու- մի մասին: Նոյ. 12-ին Լ. Սօլսբըրիի հեռագրաւ ցաւ յայտնեց Ռուսիոյ Կառավարութեան այս վերապահման վրայ, ասելով ի միջի այլոց, որ նորանոր առաջարկ- ների ներկայացումը Սուլթանին, առանց կանխապատ- րաստ ճնշումի համաձայնութեան, փաստ պիտի լինի Սուլ- թանին, որ իւր նախկին քաղաքականութիւնը շարունա- կէ զարձեալ:

Այս միջոցներին Աւստրիայից ստացվեցաւ մի հեռա- գիր, որի մէջ Կառավարութիւնը բոլորովին պատրաստ կը ներկայանար Լ. Սօլսբըրիի առաջարկին, բայց այն անհրաժեշտ պայմանով, որ ճնշում բանեցնելու հար- ցի մէջ, կանխապէս համաձայն լինէին բոլոր պետու- թիւնները, որպէսզի բարենորոգմանց առաջարկը վերս- տին մերժման նախատիքից զերծ մնար:

Նոյ. 25-ին, յանկարծ, մի շարաթւան մէջ, տե- սարանը փոխվում է և Յարը ուղարկում է պ. Շիշքին հաղորդելու իւր կողմից Սըր Ն. Օ'Կոնէտին, թէ Ռու-

«իոյ Կառավարութիւնը համաձայն է ճշշում բանեցընելու առաջարկին, եթէ եւրօպական միաձայն պահանջին հակառակ գայ Սուլթանը, և թէ իւր այդ որոշումը հաղորդել տուած է նաև ի Եւրօպական Թուրք դեսպանի միջոցաւ: Յարի այս համաձայնութեան մէջ, սակայն, մուլթ կէտեր կային դարձեալ, որ Սուլթանը պարզել ջանաց զանազան հեռագիրներով: Ի՞նչ էր Յարի այս յանկարծական փոփոխութեան պատճառը, յայտնի չէ. առձեռն հեռագիրներից միայն գիտելի է, որ նոյ. 13-ին պ. Նելիգօֆ Պետերբուրգ գնալու համար Վիեննայից անցաւ և մնաց այնտեղ երկու օր, բոլորովին գաղտնի պահելով իւր տեսակցութիւնները: Յետոյ, նոյ. 19-ի միջոցներին իմացվեցաւ որ Պետերբուրգի մէջ մեծամեծ ինտրիգներ կային Արտաքին Գործոց Նախարարի ընտրութեան առթիւ, ի մէջ Ֆրանսասիրական կուսակցութեան ներկայացուցիչ պ. Շիքսբինի, և միւս կողմէ պ. Նելիգօֆի: Իմացվեցաւ նոյնպէս, որ այդ ինտրիգները ծայրայեղ սաստկութեամբ լարուած էին միմեանց դէմ, ըստ որում Նելիգօֆ մի քանի օր միայն պիտի մնար ի Պետերբուրգ: Իմացվեցաւ դարձեալ որ այդ միջոցին Ռուս քաղաքականական շրջանակները, աւելի կարեւոր հարցի մը նկատմամբ՝ երկու բանակի բաժնվել էին, այն է՝ Թուրքիոյ վրայ ճշշում բանեցնել, թէ ոչ: Վերջապէս գեղ. 21-ին, Կոստ Գէյմ հեռագրում է Լ. Սուլթանին թէ, իւր Կառավարութիւնը (Ռուսիա), համաձայն է Պետութեանց յի սկզբան՝ հաստատապէս պնդելու բարենորոգումների գործադրութեան համար, և յետոյ՝ եթէ հարկ լինէր, գործածել ճշշման ամեն կարելի և տրամադրելի միջոցներ, որոնց մանրամասնութիւնը վիճարկելի մնում էր:

Յրանաւ ևս, գեղ. 24-ին, իւր համաձայնութեան իբր նախնական պայմաններ կը ներկայացնէր հետեւեալ կէտերը.

- 1 — Օսմանեան Կայսրութեան ամբողջութիւնը պէտք է անխախտ պահել:
 - 2 — Ո՛չ մի կէտի վրայ առանձին գործողութիւն չպէտք է լինի:
 - 3 — Կոնստանտնուպոլիս չպէտք է հաստատուի:
- Ֆրանսական Կառավարութիւնը այն կարծիքն էր յայտնում նաև, որ բարենորոգումները պէտք է լինեն՝ Օսմանեան Կայսրութեան բոլոր ժողովուրդների համար, առանց խտրութեան ցեղի և կրօնի: Իսկ, վերաբերմամբ ճշշման հարցին, Ֆրանսական Կառավարութիւնը չէր մերժում քննել խնդիրը հարկ եղած ժամին, երբ Պետութիւնները բոլորն էլ նրա բացարձակ անհրաժեշտութիւնը ընդունէին: Վերջ ի վերջոյ, մի շարք բանակցութիւններից յետոյ, Յունվար 2-ին, Ֆրանսա ևս տուաւ իւր վերջնական համաձայնութիւնը Սուլթանին առաջարկին, ճիշտ Իտալական Նախարարութեան ձևով

Օ. անազան տեղերից մեզ գրում են. —
Հնչական կուսակցութիւնից արտաբերված Ա. — Ֆարի-Ֆրանսական խմբակը կուսակցութեանս անունով կեղծ կնիքներ պատրաստելով և կնքված կեղծ նուիրատուներ ցրվելով՝ ջանք է անում խաբէութեամբ դրամ հաւաքել: Այս առթիւ զգուշացնում ենք հայ հասարակութեան՝ չը խաբվել այդ բաղդախնդիր խաբեբաներից և յանուն Հնչական կուսակցութեան ոչ մի դրամ չը յանձնել:

ՀՐԱՊԱՐԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մենք՝ Ամերիկահայատակ Հնչականներս՝ Հնչ. կուսակցութեան Կենտրոնի կողմէ երկու տարի առաջ ուղարկուած էինք Կիլիկիայ, և տասը ամիսներէ ի վեր կը գտնուէինք Հալէպի բանտը: Իսկ այժմ՝ ազատուած լինելով՝ պարտք կը դրանք հրապարակապէս յայտարարել, թէ մենք հաւատարիմ ենք և կը մնանք Հնչական կուսակցութեանը, իր Գրօնին և միշտ վստահ ենք անոր Կեդրոնի անկեղծութեան ու ուղղամտութեան վրայ: Ընդհակառակը, կարհամարհանք Ալֆարիական — Ֆրանսական, կեղծ. Հնչական դաւադիր խմբակը, որին մէջ կը գտնուին բոլորովին անվստահելի, խաբեբայ, շահախնդիր և վնասակար մարդիկ: Նաև, մասնաւորապէս մեր պարտքը կը համարենք տեղեկագրական փաստերով ժամանակին ապացուցանել այն խարդախ, խաբէական և վնասաբեր ընթացքը, որ Աղասի-Հասո կոչուած անձը ունեցած է Կիլիկիայի կողմերը:

Հնչական կուսակցութեան դէմ լարուած յայտնի դաւադրութիւնները անցեալ սեպտեմբեր ամսէն դեռ շատ առաջ սկսուած էին, և այդ մասին Ալֆարի — Ֆրանսականներու բոլոր մեքենայութիւնները, որ նախապէս մուլթի մէջ կը մնային, յետոյ և այժմ այլ ևս բոլորովին պարզուած են ամբողջ Կիլիկիայի մէջ, արհամարուած և զղուելի դարձած այդ խմբակը ամեն ճիգ թափեց խաբելու, շահագործելու համար անոնց, որոնք արդէն ատելով կըտային Ալֆարի (Ռուշտունի), Ալաաի ևն. ևն. անունները:

Մնալով միշտ հաւատարիմ Հնչ. կուսակցութեան:

Կուռնկ.	Շաւարշ.
Ռուբէն.	Վեռի.
Ժիրայր.	Վերիմ.
Մոսա.	Վարդէս.
	Ներսէս.

«ԱՊՏԱԿ» ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ (ՄԻԱՄՍԵԱՅ)

Լոյս տեսաւ «Ապտակ» երրորդ տարւայ թիւ 8, Դեկտեմբերի համարը: Նկարներ. — Վերջնագիր Եւր. Պետութիւնների առ սուլթան համիտ. — Զաղաքակրթեալ աշխարհին ո՞վ պիտի մատուցանէ այս ծառայութիւնը:
«Ապտակ» այդ համարի ըովանդակութիւնն է. —
Մտախօսը. — Մահուան սպառնալիք Մ. Զերազի դէմ. — Խարդախը. — Կտրիճը (ոտամաւոր) խնդը. — Menu. — դէս ու դէս. —
«Ապտակ» նանեղունք. Բէպուս թիւ 9. — Թիւ 8 Բէպուսի լուծումը:
«Ապտակ» տարեկան բաժանորդագիրն է 5 ֆրանկ:

Հնչ. ԿՈՆՍՏԱՆԾՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ.
Ժողովրդական ԳՐԱԴԱՐԱՆ. գրքոյի երկրորդ.
ԳՐԻՐԵԼԻ.
ԻՐ ԿԵԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ
ԹԱՐԳ. ԻՏԱԼԵՐԵՆԵՑ. ԳԻՆ 1 ՖՐ. 50 ՍԱՆՏ.

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և դրամ ու մանդատ ուղարկել հետեւեալ հասցեով. —
M. Beniard. — 22, Ormiston Road, Shepherd's Bush.
London W. [Angleterre].